

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳՈՌ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՎ ԱՄՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՏ ՕՐԵՆՍԳՐՔԻ 123.3-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ՝
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԴԱՏԱՍ-
ԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 դեկտեմբերի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թո-
փուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/
դիմողի ներկայացուցիչներ, փաստաբաններ Ռ. Ահարոնյանի, Ս. Զաղինյանի,
գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի հեղափոխություն-
ների եւ վերլուծությունների կենտրոնի փորձագետ Ն. Սարգսյանի,
համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատա-
րանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գոռ Անդրիաս-
յանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենս-
գրքի 123.3-րդ հոդվածի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը հա-
մապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Անդրիասյանի՝ 01.08.2013թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգիրքը ՆՍՄՏ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Դիմողի կողմից վիճարկվող նորմը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքում լրացվել է Ազգային ժողովի կողմից 2012 թվականի փետրվարի 7-ին ընդունված, ՆՏ Նախագահի կողմից 2012 թվականի մարտի 1-ին ստորագրված եւ 2012 թվականի մարտի 17-ին ուժի մեջ մտած՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-2-Ն ՆՏ օրենքով:

Օրենսգրքի վիճարկվող նորմը սահմանում է. «Օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվրանգության գործիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաեւ անվրանգության գործիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղեւոր փոխադրելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապարիկի չափով»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետելյալին. ՆՏ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տեսուչի կողմից 27.06.2012 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն՝ Գոռ Անդրիասյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով նախատեսված խախտում կատարելու մասին:

ՆՏ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 27.06.2012թ. թիվ ԱԷ000917 որոշմամբ Գոռ Անդրիասյանը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի, ենթարկվել է վարչական պարասխանատվության՝ տուգանքի 5000 ՆՏ դրամի չափով:

ՆՏ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 14.07.2012թ. գրությամբ Գոռ Անդրիասյանին հայտնվել է, որ թիվ ԱԷ 000917 վարչական իրավախախտման արձանագրության հիման վրա կայացված որոշումը թողնվել է անփոփոխ, քանի որ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի՝ անվրանգության ամրագրությունը չամրակապած ուղեւոր փոխադրելն առաջացնում է փուզանքի նշանակում 5000 ՆՏ դրամի չափով:

ՆՏ վարչական դատարանը, քննելով թիվ ՎԳ/5368/05/12 վարչական գործն ըստ հայցի Գոռ Անդրիասյանի ընդդեմ Նայաստանի Նանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին, իր 03.12.2012թ. վճռով մերժել է հայցը:

ՆՏ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 09.04.2013թ. որոշմամբ ՆՏ վարչական դատարանի թիվ ՎԳ/5368/05/12 վարչական գործով 03.12.2012թ. կայացրած վճիռը թողել է ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանն իր՝ 29.05.2013թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Վիճարկելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի համապարասխանում պարօթի համաչափության սկզբունքին: Իր դիրքորոշումը հիմնավորելով ՆՏ սահմանադրական դատարանի ՍԴՈ-920 եւ ՍԴՈ-924 որոշումներում պարօթի համաչափության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ դիմողը, մասնավորապես, գտնում է, որ այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող նորմի սանկցիան չի նախատեսում քարքերակված մոտեցում հոդվածում նախատեսված արարքների համար եւ իրավակիրառողի համար չի նախատեսում հնարավորություն՝ սահմանելու քարքեր պարօթաչափեր, խախտում է սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշումներում ամրագրված՝ համաչափության սկզբունքի քարք հանդիսացող քարքերակման չափանիշը: Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նաեւ վկայակոչելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 33-րդ հոդվածը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդվածը

համապատասխանում է ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում, պատասխանող կողմը, վկայակոչելով ՆՏ սահմանադրական դատարանի 12.10.2010թ. ՍԴՈ-920 եւ 16.11.2010թ. ՍԴՈ-924 որոշումներում իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սկզբունքի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված իրավակարգավորման նպատակը, կարծիք է հայտնում, որ օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված փուզանքի չափն արդարացված է եւ համապատասխանում է վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սկզբունքի պահանջներին:

Անդրադառնալով համաչափության սկզբունքի հիմքում ընկած՝ իրավաբանական պատասխանատվության չափի փարբերակման սկզբունքին եւ արձանագրելով այն փաստը, որ օրենսգրքով փուզանքների չափն սկսվում է հիմնականում հենց նվազագույն աշխատավարձի հնգապատիկ չափից՝ բացառությամբ մի քանի դեպքերի, երբ օրենսգրքով փուզանքի չափը նախատեսված է նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով, որ օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված փուզանքի չափն ինքնին ցածր է, պատասխանող կողմը գտնում է, որ իրավաբանական պատասխանատվության չափի փարբերակման սկզբունքի փաստակցության հետ օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված իրավակարգավորման պայմաններում ապահովվում է կատարված արարքի դիմաց համարժեք պատասխանատվությունը:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկները վերաբերում են ոչ թե ինքնին իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած՝ պատասխանատվության համաչափության սկզբունքին, այլ նշված սկզբունքի հիմքում ընկած՝ պարտաչափի փարբերակման սկզբունքին, սահմանադրական դատարանը հարկ է համարում հենց այդ սկզբունքի փաստակցության գնահատել օրենսգրքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը՝ հաշվի առնելով նաեւ իր ՍԴՈ-924 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանն իր՝ 16.11.2010թ. ՍԴՈ-924 որոշման 7-րդ կետում, անդրադառնալով իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած՝ պարտաչափի փարբերակման սկզբունքին՝ ընդգծել է **զանցանքի բնույթը եւ լրջությունը**: Վերահաստատելով իր՝ 16.11.2010թ. ՍԴՈ-924 որոշման 7-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ կախված զանցանքի բնույթից եւ լրջությունից,

այսինքն՝ զանցանքի առանձնահատկություններից՝ **ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանելու փոխառված գանգանքի համար նախատեսված պարտազանցի ստորին և վերին սահմանները՝** չբացառելով նշված դեպքերում այդպիսիք սահմանելու՝ օրենսդիր մարմնի բացառիկ հայեցողական իրավասությունը: **Խոսքն այն դեպքերի մասին է, երբ գանգանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով և ոչ որեւէ այլ հանգամանքներով:** Օրենքով նախատեսված դեպքերում փորձաքննության միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի փորձաքննության միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղեւոր փոխադրելը որեւէ այլ հանգամանքով արդարացնելի չէ, փաստ է օրենքի խախտումը, հետևանքը միարժեք պետք է լինի:

Տվյալ դեպքում առանձնակի կարեւորություն է սրանում այդպիսի գանգանքների համար պարտազանցի համաչափության սկզբունքի պահպանումը: Այս կապակցությամբ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված արարքի բնույթը և լրջությունը, դրանով հետապնդվող նպատակը, նախատեսված քրեական չափը, գտնում է, որ փոխառված գանգանքի վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել այդ նորմով կարգավորվող հասարակական հարաբերությունները՝ երաշխավորելով մարդկանց անվտանգությունը, և համապատասխանում է համաչափության սկզբունքին:

Նաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում փորձաքննված մոտեցման սկզբունքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՊ օրենսգրքի 33-րդ հոդվածով նախատեսված՝ մեղմացուցիչ և ծանրացուցիչ հանգամանքների կիրառման վերաբերյալ դիմողի փաստարկները, և գտնում է, որ փոխառված գանգանքի սահմանադրական դատարանի որոշումներին կատարվող հղումները դիմողի կողմից սահմանադրական դատարանի 16.11.2010թ. ՍԴՈ-924 որոշման 7-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ ճիշտ ընկալման և մեկնաբանման արդյունք է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63,

64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապերության սահմանադրական դա-
րարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 123.3-րդ հոդ-
վածը համապարասխանում է Նայասարանի Նանրապերության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապերության Սահմանադրության 102-րդ հոդվածի
երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում
հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԳՈ-1130